իսկ եթէ այդ միջոցն էլ չի օգնի և չի ազդի նոցա վրայ՝ այն ժամանակ դիմել նորին Սրբութեան, ուղարկելով Կրօնական Ժողովի այդ մասին կազմած արձանագրութիւնը։ 25 յունուարի, թ. 168։

ՄԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

18 դեկտմ., թ. 712. Մինօդը՝ Ատրպատականի Առաջնորդի միջնորդութեան համաձայն որոշեց. Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի համաձայն ուղարկել Մ. Աթոռի գանձարանից մի տարի ժամանակով Ուրմիոյ փոխանորդ Տ. Խորէն վարդապետ Լազարեանին ամսական 30 ռուբլի, ի նկատի ունենալով Ուրմիոյ փոխանորդութեան ծայրայեղ նիւթական սուղ միջոցները։

18 դեկտմ., թ. 714. Մինօդը՝ քննութեան առնելով Մոզդոկի Դէորգ քհնյ. Փարեմուզեանի մեղադրութեան գործը՝ օտարին և վիճակային հասոյթների հաշիւների մէջ անհարազատ գտնուելու, Տէր-Ռափայէլեանի պսակը ճշտութեամբ չարձանագրելու և ծննդեան քաղուածները շրջաբերական մատեան չմուծելու ու եկեղեցու սպասաւորին պաշտօնից հեռացնելու համար, որոշեց. հաստատել Աստրախանի Կոնսիստորիայի որոշումը, որով Փարեմուզեան քհն. դադարում է քահանայագործութիւնից 2 ամիս ժամանակով։

20 դեկտմ., թ. 718. Մինօդը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի դեկտմ. 20-ի կոնդակի, որոշեց. պատուիրել Մ. Տաճարի լուսարարապետի օգնականին դեկտեմբ. 23-ին երդուեցնել Իջման ս. Սեղանի առաջ Զմիւռնիայի առաջնորդ Մատթէոս Ծ. վարդապետ Ինճէեանին՝ նոյն ամսի 24-ին եպիսկոպոս ձեռնադրելու համար։

27 դեկտ., թ. 728. Մինօդը՝ քննութեան առնելով Մերվի Աղէքսանդր քհնյ. Պոպովեանի և Արշակ քհնյ. Տէր Ոսկանեանի ու Ասխարատի Շմաւոն քհնյ. Աղբալեանի մեղադրութեան գործը, որոշեց. կարգել յիշեալ քահանաների դէմ

յարուցուած մեղադրանքը՝ Զինարեան, Ասրեան և Աղբալեան օրիորդների պատկը 13 տար. աւելի և 16-ից պակաս հասակում կատարելու համար, ի նկատի ունենալով, որ նոքա, որպէս Անդրիկովկասի բնակիչներ, չափահաս են համարւում 13 տար. վեր հասակում, իսկ նոյն քահանաների մեղադրանքը՝ հարսնացուների տարիքը չափաբերականում ոչ բոլորովին՝ այլ մօտաւոր ճշտութեամբ արձանագրելու համար, կարճել 1913 թ. փետր. 21-ի Բարձր. Հրովարտակի զօրութեամբ:

27 դեկտմ., թ. 730: Մինոգը՝ Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. Վեհափառ Կաթուղիկոսի պատուէրի համաձայն թոյլ տալ Վրաստանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Գանձակի գաւ. Զագիր գիւղի բնակիչ Բէգլար Տէր-Եղիազարեանին, և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ Զագիր գիւղի վրայ, պարտաւորեցնելով նրան մի ամսուայ ընթացքում ձեռք բերել ձայնագրութեան վկայական:

27 դեկտեմբերի, թ. 731. Մինոգը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի 1913 թ. նոյեմբ. 29-ի № 8293 յայտարարութիւնը, որոշեց. բացատրել նոյն Կոնսիստորիային, որ հանդուցեալ քահանաների դիակի վրայ դրած գանձանակատուփից գոյացած դրամը պատկանում է օծողին, իսկ պատարագի ժամանակ շրջեցրած գանձանակադրամը պատկանում է պատարագիչ քահանային:

4 յունուարի, թ. 1. Մինոգը որոշեց. տալ վանքապատկան երկու արօտատեղերը (զոռուղներ) Վաղարշապատի Արամ Այվազեանին և Յարութիւն Բզնունուն մի տարի ժամանակով՝ սկսած 1914 թ. յունուարի 1-ից մինչև 1915 թ. յունուարի 1-ը առաջինը (70 դես.) 1001 ռ. 15 կոպ. և երկրորդը (58 դես.) 601 ռուբ. այն պայմանով, որ յուլիսի 1-ից յետոյ Մայր Աթոռի ագարակի անասունները անարգել արածել կարողանան յիշեալ արօտատեղերում:

15 յունուարի, թ. 3. Սինոդը որոշեց. Նախկին տարիների օրինակի համաձայն ուղարկել Կ. Պոլսի Ազգային Ս. Փրկիչ հիւանդանոցին Մայր Աթոռի կողմից մի հարիւր ռուբլի նպաստ։

15 յունուարի, թ. 8։ Սինոդը՝ քննութեան առնելով Երևանի Թեմական դպրոցի 1914 թ. նախահաշիւը, որոշեց. հաստատել ներկայացրած նախահաշիւը, որի համաձայն մուտք է սպասւում 32000 ռուբլի և նոյնքան էլ ելք, և ուղարկել իգործադրութիւն։ Մուտքի գլխաւոր յօդուածներն են՝ 8000 ռ. դպրոցական արդիւնք չափաբերականներից և պահկներից, մոմավաճառութիւնից 2500 ռուբլի, կալուածներից և պասոսաժից՝ 11600 ռ. թոշակներից 3000 ռ. նպաստ Տ. Աֆրիկեանից 1000 ռ. տոկոսներ 1800 ռ. և էլն, իսկ ելքի գլխաւորը յօդուածներն են՝ ուսուցիչներին 19674 ռ. կալուածական ծախք և հարկ 2500 ռ., նպաստ Մ. Ղարաքիլիսայի ծխ. դպրոցներին 2500 ռ., Երևանի Դայեանեան օր. դպրոցին 1000 ռ. և Ս. Հռիփսիմէի գիմնազիային 500 ռ. էլն։

15 յունուարի« թ. 10. Սինոդը համաձայն Վրաստանի Հ. կոնսիստորիայի միջնորդութեան, որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ախալքալակի գաւ. Թոք-Սամսար գիւղի բնակիչ Կարապետ Տէր-Յարութիւնեանին և առաջադրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ գիւղի վրայ։

17 յունուարի, թ. 12. Սինոդը՝ լսելով Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու ծխական հոգաբարձութեան անցեալ տարուայ նոյեմբերի 5-ի յայտարարութիւնը, որով խնդրում են վերադարձնել պետական գանձարանից եկեղեցական կալուածները վերադարձնելուց յետոյ Սինոդին ուղարկուած Ս. Փրկիչ եկեղեցու 3000 ռուբլին, որոշեց. ի նկատի ունենալով, որ Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն 1906 և 1907 թ. ուղարկուել է Կովկասի Տ. Փոխարքայի թոյլտուութեամբ 4012 ռ. 52 կոպ. աւելի նրանց հասանելի գումարից, մերժել նոյն եկեղեցու հոգաբարձութեան

խնդիրը 3000 ռ. վերադարձնելու վերաբերմամբ և պատուիրել Վրաստանի Կոնսիստորեային պահանջել և ստանալ նոյն հոգաբարձութիւնից աւելորդաբար ստացած գումարը։

17 յունուարի, Թ. 13. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ յունուարի 8-ի, № 38, կոնդակը, որով պատուիրում է անել արժանի տնօրինութիւն Սևանի հռչակաւոր մենաստանը բարեկարգ և մաքուր վիճակի մէջ դնելու համար, որոշեց. Համաձայն Նորին Սրբութեան տնօրինութեան, նախ, ազատ համարել Սևանի վանահօր պաշտօնից Սարգիս եպիսկոպոսին և մենաստանի ընդհանուր վերահսկողութիւնը յանձնել Երևանի փ.-թեմական Խորէն եպիսկոպոսին ժամանակաւորապէս մինչև Նորին Սրբութեան առանձին տնօրինութիւնը և, երկրորդ՝ պատուիրել Սևանի միաբաններ Եղիշէ և Մեսրոպ վարդապետներին վերադառնալ մենաստանը և սրտեռանդ աշխատել վանքի բարենորոգութեան համար Տ. Խորէն եպիսկոպոսի վերահսկողութեամբ, որ Նորին Սրբութեան կանխագոյն հաճութեամբ վանքի միաբաններից նշանակելու է առանձին խորհուրդ։

17 յունուարի, Թ. 14. Սինոդը՝ քննութեան առնելով Հերթեցեան նախկին քահանայի անցեալ տարուայ հոկտեմբերի 25-ին կառավարիչ Սենատին ուղարկելու համար տուած բողոքը Սինոդի այն օրագրական վճռի դէմ, որով կարգալոյծ է եղած Հերթեցեանը, որոշեց. Համաձայն Օր. XI հտ. I մ. 1143 յօդ. 1 հտ. II մ. 27 յօդ. 8 կէտի և XI հմ. 570 և 690 յօդուածների, մերժել Հերթեցեանի խնդիրը Նրա բողոքը Կառավարիչ Սենատի վճռաբեկ դեպարտամենտին ուղարկելու մասին և վերադարձնել այդ բողոքը Նրան։

20 յունուարի, Թ, 15 Սինոդը որոշեց. պատուիրել Ախալցխայի Հոգ. Կառավարութեան Ծիրող գիւղում գտնուող Էջմիածնապատկան պարտէզները տալ կապալով Ախալցխայի բնակիչ Յակոբ Բայբուրդեանին տասը տարի ժամանակով տարեկան 40 ռուբ. վարձով, այլև պտղատու

ծառերի թիւն աւելացնելու և պարտէզները ցանկապատելու պայմանով։

20 յունուարի, թ. 16. Մինոզը՝ ի նկատի ունենալով, որ Երևանի նահանգ. Դատարանի վճռով արդէն քանդուած է Մինոզի և «Տայլար» հողերի կապալառու Մ. Կարապետեանի մէջ կապած պայմանը, որոշեց. նշանակել այս տարուայ մարտի 5-ին աճուրդ առանց կրկնաճուրդի կապալով տալու համար Կարսի շրջանում գտնուող վանքապատկան 600 դես. «Տայլար» կոչուած հողերը, յայտարարելով, որ այդ հողերը տրուում են ինքը տարովաճուրդն սկսուելու է տարեկան 1700 ռուբլուց, և գրաւական է ներկայացուելու աճուրդին մասնակցելու համար 600 ռուբլի։

20 յունուարի, թ. 17. Մինոզը՝ Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ախալքալակի Դառ. Իխտիլա–Սամսար գիւղի բնակիչ Արշակ Տէր-Խաչատրեանին և պատուիրել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի վրայ։

20 յունուարի, թ. 20 Մինոզը Վրաստանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն որոշեց. թոյլ տալ նոյն կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Գորու Գառ. Ղազիլիսա գիւղի բնակիչ Յովհաննէս Ազամեանին և առաջարկել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ նոյն գիւղի վրայ։

24 յունուարի, թ. 31. Մինոզը՝ նախապէս ստանալով Կովկասի Տ. Փոխարքայից հաճութիւն Կովկասի սահմաններում յօգուտ Երևանի Թեմական դպրոցի նրա 75 ամեայ յոբելեանի առթիւ 200,000 ռուբլու հանգանակութիւն անելու մասին, որոշեց. ուղարկել Երևանի Թեմական դպրոցի Հոգաբարձութեան յատուկ ժապաւինեալ մատեան, պատուիրել կազմակերպել և սկսել կամաւոր նուիրատուութիւններ ժողովելու գործը և հանգանակու-

թիւնը վերջանալուց յետոյ մատեանը ուղարկել Սինոդիս ի ղննութիւն։

24 յունուարի, թ. 32. Սինոդը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ յունուարի 9-ի, № 94. կոնդակը, որոշեց, Համաձայն Նորին Սրբութեան տնօրինութեան ընդունել նախկին վարդապետ Արսէն Դլտճեանին հոգևոր կոչման մէջ, վերադարձնել նրա նախկին վարդապետական կարգը և նշանակել նրան Սանահնի վանքի միաբան։

27 յունուարի թ. 35 Սինոդը՝ Վրաստանի թեմի առաջնորդի անցած տարուայ դեկտեմբերի 23-ի, № 1465 յայտարարութիւնից նկատելով, որ Տփխիսի Ս. Մինաս եկեղեցու երկրորդ քահանայի ընտրութեան մասնակցել են 5-րդ ծխական ժողովում 300 ծխականներից ընդամենը 28 հոգի, որոշեց. բացատրել թեմի առաջնորդին, որ կայացած ժողովը չի համապատասխանում ծխական կանոնադրութեան պահանջներին, հետևապէս ընծայացու Սարգիս սարկաւագ Երզնկեանի ընտրութիւնը պէտք է համարել չեղեալ և ապագայում առաջնորդուել ծխական կանոնադրութեան ճիշտ իմաստով։

29 յունուարի, թ. 72. Սինոդը՝ Վրաստանի Հ. Կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, որոշեց. թոյլ տալ նոյն Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Ախալցխայի գաւ. Տաւալա գիւղի բնակիչ Եղիշէ Տէր-Յակոբեանին, և առաջարկել թեմի առաջնորդին ձեռնադրել նրան քահանայ նոյն գաւառի Մուղրութ գիւղի վրայ։